



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Մ Ա Ն

23 մարտի 2017 թվականի N 312 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2015 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի N 1044-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ մ ւ մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի «Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգը սահմանելու մասին» N 1044-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 21.1-ին, 21.2-րդ և 21.3-րդ կետերով.

«21.1. Սույն կանոնակարգի 5-րդ կետի 5-րդ, 14-րդ, 15-րդ, 19-րդ և 20-րդ ենթակետերով սահմանված խնդրահարույց դեպքերում համագործակցող կողմը սույն կանոնակարգի 7-րդ կետում սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանն է տրամադրում սույն կանոնակարգի 11-րդ կետի՝

1) 4-րդ ենթակետով սահմանված տվյալները.

2) 6-րդ ենթակետի շրջանակներում ստորև նշված խնդրահարույց դեպքերի համար հետևյալ տվյալները՝

NN ը/կ	Խնդրահարույց դեպքը	Ծածկագիրը (գաղտնի)	Համագործակցող կողմը	Վարքի ատանձնա-
-----------	--------------------	-----------------------	------------------------	-------------------

			հատկությունները	
1.	Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն և հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները (միայն զինծառայողների մասով) կատարելիս զինծառայողի կամ կամավորականի հաշմանդամություն ձեռք բերելը		ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչություն	X
2.	Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների հետևանքով, մարտական հերթապահություն և հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականությունները (միայն զինծառայողների մասով) կատարելիս զինծառայողի կամ կամավորականի զոհվելը (մահանալը) կամ անհայտ կորած համարվելը		ՀՀ պաշտպանության նախարարության զինծառայողների սոցիալական պաշտպանության վարչություն	X
3.	«Ենթադրյալ» ընտանեկան բռնության ենթարկված անձ հայտնաբերելը		ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն	X
4.	Անձի հոգեկան առողջության խնդիրներ ունենալը (հոգեկան և վարքի խանգարումների դասին համապատասխանող հոգեկան անառողջ վիճակներ կամ վարքի խանգարումներ)		«Սևանի հոգեբուժական հիվանդանոց» ՓԲԸ (համաձայնությամբ) «Նուբարաշեն» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) «Նորք» հոգեբուժական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ)	
5.	Ալկոհոլային խմիչքների օգտագործումը չարաշահելը (ալկոհոլի գործածում վնասակար (կործանարար) հետևանքներով)		«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ)	
5.1.	Ալկոհոլային խմիչքների օգտագործումը չարաշահելու վտանգի առկայությունը		«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ)	

			<p>բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն ատրնթեր ՀՀ ոստիկանություն</p>	
6.	Թմրամիջոցներ և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործելը		<p>«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ)</p>	
6.1.	Թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի գործածումը դադարեցրած անձ՝ գտնվում է դադարի (ռեմիսիայի) շրջանում կամ հաջողությամբ ավարտել է բուժման կուրսը		<p>«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ)</p>	
6.2.	Թմրամիջոցներ և (կամ) հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր օգտագործելու վտանգի առկայությունը		<p>«Նարկոլոգիական հանրապետական կենտրոն» ՓԲԸ (համաձայնությամբ) բժշկական օգնության և սպասարկման տվյալ տեսակի լիցենզիա ունեցող այլ բժշկական հաստատություններ (համաձայնությամբ) ՀՀ կառավարությանն ատրնթեր ՀՀ ոստիկանություն</p>	

21.2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նա-

խարարությունը սույն կանոնակարգի 21.1-ին կետով սահմանված տվյալներն ստանալուց

հետո եռօրյա ժամկետում սոցիալական աջակցության համապատասխան տարածքային գործակալությանը (բաժնին) է փոխանցում 21.1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն ստացված տվյալները և 2-րդ ենթակետով ստացված տվյալներից՝ ծածկագրերը և վարքի առանձնահատկությունները:

21.3. Սույն կանոնակարգի 21.1-ին կետով սահմանված տվյալները տրամադրելու համար սոցիալական աջակցության կարիք ունեցող անձից համաձայնություն ստանալու գործընթացը կազմակերպում է համապատասխան համագործակցող կողմը:»:

2. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝ մինչև 2018 թվականի օգոստոսի 1-ը ապահովել սոցիալական դեպքի վարման տեղեկատվական ենթահամակարգում Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1044-Ն որոշման հավելվածի 21.1-ին կետում նշված խնդրահարույց դեպքերի վարումն ապահովող պահանջների կիրառումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

2017 թ. ապրիլի 3
Երևան



Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ